

SEVERAL PECULIARITIES OF THE JAPANESE NATIONAL RELIGION SUMMARY

P. A. BARSEGHYAN

Shinto, the national religion of Japanese differs from the modern national religions. The article touches upon several peculiarities and the main scenes of its historical development. The worship of camins, the legends of space and the notions about the divine origin of imperial power are distinguished from the main peculiarities of Shinto.

ՇԻՎԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պ. Ա. ԲԱՐՍԵԳՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ժամանակակից աշխարհում առավել հայտնի և զարգացած կրոններից մեկը Յնդկաստանի ազգային կրոն հինդուիզմն է, որի հետևորդների թիվը հասնում է մոտ մեկ մլրդ.-ի: Իբրև կրոնական ֆենոմեն՝ հինդուիզմը առանձնանում է բարդությամբ և հակասականությամբ, խճճվածությամբ ու քաոսայնությամբ: Լայն իմաստով հինդուիզմը ոչ միայն և ոչ այնքան կրոն է, որքան կենսակերպ և վարքագծի ամբողջական չափանիշ: Յինդուիզմի կրոնական համակարգն իր մեջ զուգակցում է իրար հակադրվող ծայրահեղություններ, հարմարվում է ամենաբազմազան պայմաններին, միավորում բազմազան և տարատեսակ հավատալիքներ, ձևավորում կրոնափիլիսոփայական բարդ համակարգեր՝ միաժամանակ հանդես գալով իբրև բազմաթիվ ուղղությունների ամբողջություն:

Ժամանակակից հինդուիզմում առանձնանում են երկու հիմնական ուղղություններ՝ **վիշնուականությունը և շիվայականությունը**, որոնք համախմբում են հավատացյալ հինդուիստների ճնշող մեծամասնությանը: Երկու ուղղություններն էլ ձևավորվել են հազարամյակների ընթացքում՝ ներառելով տարբեր պաշտամունքներ ու առասպելներ, տարբեր աստվածությունների կրոնադիցաբանական հատկանիշներ ու գործառույթներ: Յինդուիզմի այս հիմնական ուղղությունների կենտրոնական պաշտամունքային օբյեկտները երկու խոշոր աստվածություններ են՝ Վիշնուն և Շիվան, որոնք Բրահմայի հետ միասին կազմում են հինդուիստական գլխավոր պաշտամունքային եռաստվածային համակարգը՝ **տրի-մուտրին**¹: Ավանդաբար Բրահման համարվում է արարիչը, Վիշնուն օժտված է պահպան, իսկ Շիվան կործանիչ հատկություններով, սակայն այդ երեք բնութագրումները լիարժեքորեն և ամենայն մանրամասնություններով չեն ներկայացնում այս երեք աստվածությունների իրական կերպարն ու հատկական գծերը, ուստի այսօր էլ արդիական է հինդուիստական աստվածությունների պաշ-

¹ Յինդուիզմի և տրիմուտրիի մասին առավել մանրամասն տե՛ս Encyclopedia of Religion, Second Edition, 2005, Thomson Gale, p. 3988-4008.

տամունքի և սիմվոլների համակողմանի և ամբողջական ուսումնասիրությունը, որը հնարավորություն կտա լիարժեքորեն հասկանալ և գնահատել մեծ զարգացում ապրող հինդուիզմի հիմնական առանձնահատկությունները:

Այդ համատեքստում առավելապես կարևորվում է շիվայականության ուսումնասիրությունը, քանի որ այս ուղղությունը առավել ամբողջական է ներկայացնում հինդուիզմի կրոնադիցաբանական հավատալիքների պատմական զարգացումը, էվոլյուցիան, կենսափիլիսոփայությունը և հասարակական կենսունակությունը: Այն միաժամանակ ունի նաև աշխարհայացքային և իմացաբանական նշանակություն, որն այսօր էլ ընկած է շիվայականների կրոնադիցաբանական և կենսափիլիսոփայական պատկերացումների հիմքում:

Ինչպես արդեն նշեցինք, հինդուիստական տրիմուտրիում Շիվան կործանիչ աստվածն է, որը տիեզերական յուրաքանչյուր շրջափուլի ավարտին կործանում է աշխարհը: Իբրև առանձին և յուրահատուկ ուղղություն՝ շիվայականության մեջ Շիվան խտացնում է միաժամանակ բոլոր՝ արարիչ, պահպան, կործանիչ գործառույթները և առաջ է անցնում մյուս աստվածություններից: Փաստացի շիվայականության մեջ Շիվան գերազույն ամենագոր աստվածն է: Նրան որպես կանոն պատկերում են յոգի տեսքով՝ ձեռքին եռաժանի, իսկ կողքին հաճախ գեղեցկուհի կինն է՝ Պարվատին և երկու որդիները²:

Շիվայի պաշտամունքին բնորոշ որոշ գծեր ենթադրվում է, որ ընդհանրություն ունեն մախահնդկական քաղաքակրթության հնագույն կրոնադիցաբանական պատկերացումներում առկա որոշ հավատալիքների (կենդանիների՝ մասնավորապես օձերի տիրակալի, ինչպես նաև ֆալլուսի պաշտամունքի) հետ և հուշում են Մոհենջո Դարոյի քաղաքակրթության եղջյուրավոր աստծու հետ կապը, կերպար, որին երբեմն անվանում են մախա-Շիվա³: Շիվա անունը կապվում է հին դրավիդյան «կարմիր» արմատի հետ, և ենթադրվում է, որ այս շրջանում էլ հենց ձևավորվել են այս աստծու դիցաբանական հիմնական, երբեմն իրար հակադրվող գծերը՝ էրոտիզմը և ասկետիզմը⁴:

Վեդայական դիցաբանությունում Շիվայի կերպարը դեռ տարանջատված չէ կատաղի և անսանձ Ռուդրայի կերպարից: Վեդաներում Ռուդրան ամպրոպային սարսափազդու տարերքի չար աստվածն է, մարդկանց հիվանդություններ, ախտեր և այլ դժբախտություններ ուղարկողը, որը միաժամանակ նաև առողջություն տվողն է, բժիշկներից լավագույնը և երկար կյանք պարգևողը: Նրա հիմնական մակդիրներից մեկը Շիվան էր («բարեհաճ»), որն օգտագործվում էր նրան սիրաշահելու համար: Ռուդրան արիական աստված էր, որի պաշտամունքը միաձուլվել էր տեղաբնիկ հավատալիքներին և Ռիգվեդայում դարձել նրա մեկուսացվածության և միայնության պատճառ: Ընդհանրապես նրան ընկալում էին իբրև վայրի բնության և նրա կործանիչ ուժի մարմնացում⁵:

² Մանրամասները տե՛ս Encyclopedia of Religion, p. 8038-8050.

³ Մանրամասները տե՛ս Религиоведение. СПб, 2007, с. 65-66. История религии. В 2 т. Т. 1, М. 2002, с. 310-311. Индуизм, Джайнизм, Сикхизм: Словарь, М. 1996, с. 459. **Каниткар В. П. (Хемант), Коул У. Оуен**, Индуизм, М., 2001, с. 44-46.

⁴ Տե՛ս **Альведиль М. Ф.** Индуизм. Главная религия Индии, СПб, 2006, с. 59.

⁵ Индуизм, Джайнизм, Сикхизм: Словарь, с. 379-380.

Ռուդրա-Շիվայի պաշտամունքի բարձրացումը սկսել է բրահմանականության շրջանում, որտեղ նրա կերպարը ձեռք է բերում տիեզերքի տիրակալի ընդգծված գունավորում: Բրահմաններում և ուպանիշադներում (հնագույն կրոնափիլիսոփայական ժողովածուներ) նա հռչակվում է ոչ միայն ընդհանուր տիրակալ, այլև աստվածների և տիեզերական Ոսկե նորածնի արարիչ: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ Շիվայի առաջխաղացումը հինդուիստական դիցարանում եղել է դժվարին և երկարատև, որի մասին վկայում են այլ աստվածների հետ բախումներն ու հակամարտությունը ներկայացնող բազմաթիվ առասպելները: Հատկապես առանձնանում է Վիշնուի հետ նրա հակամարտությունը, որն արտացոլվում է ոչ միայն առասպելներում, այլև իրականության մեջ երկու աստվածների հետևորդների շրջանում՝ ընդհուպ մինչև մեր օրերը: Հնդկաստանի հյուսիսում Վիշնուն և Շիվան քիչ են առնչվում, այն դեպքում, երբ հարավին բնորոշ առասպելներում նրանք նույնիսկ կապվում են բարեկամական-խնամիական կապով՝ Շիվայի որդի Մուրուգանն ամուսնանում է Վիշնուի դստեր՝ Վալլիի հետ: Նույնիսկ ձևավորվել է դիցաբանական յուրահատուկ Հարիհարայի կերպարը, որն իր մեջ խտացնում և միավորում է երկու աստվածների հիմնական գծերը:

Շիվայի դիցաբանական կերպարը վերջնականապես ձևավորվել է Մահաբհարատա էպոսում⁶: Այստեղ հստակ արտահայտվում է հինդուիստական աստծուն բնորոշ գլխավոր գործառնությունից մեկը՝ պայքարը դև-ասուրների դեմ, որը բացակայում էր վեդայական Ռուդրայի պաշտամունքում: Սակայն Շիվայի կապը չար ուժերի հետ որոշակիորեն պահպանվում է, և ընդհանրապես՝ այս աստծու հիմնական բնորոշ գիծը բազմադեմությունն է և հակասականությունը: Նա միաժամանակ և՛ արարիչ աստված է, և՛ ավերիչ, նա բարյացական է և ողորմած, սակայն նաև հանդես է գալիս **Քհայրավայի** («սարսափելի») կերպարով: Շիվան հաճախ պատկերվում է ճգնավորի կամ յոգի կերպարով, որի համար կրում է **Յոգառաջա** («յոգայի արքա») անունը: Սակայն միաժամանակ նա մեծագույն սիրեկան է, սեռական էներգիայի մարմնացումը, իսկ գլխավոր խորհրդանիշներից մեկը լինգամն է (\$ալլոս), որի պաշտամունքը առկա է Շիվային նվիրված բոլոր սրբավայրերում, և որի համար նա կրում է նաև **Լինգառաջա** (լինգամի արքա) անունը⁷:

Հակասական այսպիսի հատկանիշների ամբողջությունը վկայում է այն մասին, որ այս աստծու կերպարը դիցաբանական և մշակութային բազմաշերտ երևույթ է, որն իր մեջ միավորում, խտացնում և իբրև մեկ ամբողջություն է ներկայացնում կեցության ողջ բազմադեմությունը: Շիվայականության մեջ այդ ամբողջությունը հատկապես վառ արտահայտված է պարող Շիվայի կերպարում, որի համար նա կրում է նաև **Նատառաջա** («պարի արքա») տիտղոսը⁸: Շիվայի պարը՝ իր բազմաթիվ ձևերով, և՛ աշխարհի արարում է, և՛ նրա կենսունակության պահպանում, և՛ նաև նրա կործանումն ու ավարտ:

Շիվայի երկվորյունը դրսևորվում է ամենուր: Օրինակ, ըստ առասպելների, աստվածները ցանկանում են, որ Շիվան և նրա սիրասուն կին **Պարվատին** ծնեն

⁶ История религии. В 2 т. Т. 1, с. 311. Տե՛ս նաև Encyclopedia of Religion, p. 8039.

⁷ Տե՛ս **Альведиль М. Ф.** Индуизм, с. 62. Տե՛ս նաև Индуизм, Джаинизм, Сикхизм: Словарь, с. 460.

⁸ Տե՛ս **Альведиль М. Ф.** Индуизм, с. 60.

ռազմիկի, որը կսպանի **Թարակ** դեհն, որովհետև, ըստ գուշակության, միայն նա կարող էր դա անել: Սակայն Շիվան այնպիսի հայեցողության մեջ է խորասուզվում, որ ինչքան էլ սիրո աստվածություն **Կաման** ջանք ու եռանդ է ներդնում, չի կարողանում նրան այդ վիճակից հանել: Իսկ երբ ի վերջո հաջողվում է նրա մեջ սեր բորբոքել, ապա այն այնպիսի անզուսպ ձևեր է ընդունում, որ վտանգում է ողջ աշխարհի գոյությունը:

Այդպիսի դեպքերը բավականին շատ են հնդկական դիցաբանությունում. Շիվան մեկ ընկնում է անսանձ և մոլեգին կատաղության մեջ, մեկ էլ լցվում է անսահման բարեհաճությամբ և գութով: Փաստացի երկվությամբ են առանձնանում նրա բոլոր կերպարները: Նրան հաճախ պատկերում են ինչ-որ տեղ Հիմալայներում, խորը մեդիտացիայի մեջ ընկղմված յոգի, կամ էլ ողորմության թասը ձեռքին թափառաշրջիկ փոշեպատ ճգնավորի տեսքով: Սակայն շատ արագ նա կարող է դուրս գալ հայեցողության այդ վիճակից և տրվել կատաղի և խելահեղ պարի: Հինդուիստները համարում են, որ Շիվան ստեղծել է 108 պարեր, որոնց մեջ կան հանգիստ, դանդաղ և պոռթկուն ու կրակոտ պարեր⁹: Խելահեղ պարերի ընթացքում Շիվան իր մոգական ուժով հասանելի է դարձնում տիեզերքի բոլոր իրողությունները, իսկ տիեզերական շրջափուլի վերջում ավերում այն, քանի որ ոչնչացումը, մահը և կործանումը ևս գոյության կարևոր ձևեր են, որովհետև դրանք հաջորդում են ստեղծագործությանը, իսկ նորը հաճախ ծնվում է նախորդի մահվանից հետո:

Շիվան ապրում է ոչ միայն իր հետևորդների սիրող սրտերում և իրեն նվիրված տաճարներում, այլև ամենաչարագուշակ վայրերում՝ պատերազմի դաշտում, դիակիզման հրապարակներում, վտանգավոր ճանապարհների խաչմերուկում: Ընդհանրապես նրա մի քանի մարմնավորումները իրականում ավելի շատ սարսափ են ներշնչում, քան բարեհաճություն: Շիվայի վզից կախված է ամբողջությամբ գանգերից կազմված մանյակ, նա փաթաթված է օձերով, ձեռքին եռաժանի է, իսկ կոկորդը կապտել է այն թույնից, որը կուլ է տվել՝ օվկիանոսը խառնելու ժամանակ: Այդ ժամանակ ջրից հայտնվում են ոչ միայն բազում պետքական և հաճելի իրեր, այլև մահաբեր թույն: Փրկելով աշխարհը՝ Շիվան կուլ է տալիս թույնը և այն կանգնեցնում կոկորդում, որի համար էլ այդ օրվանից կոչվում է նաև **Կապույտ**¹⁰:

Իր կատաղի կերպարով Շիվան առասպելներում հաճախ պատերազմում է այլ աստվածների հետ՝ հիշեցնելով իր ճանապարհին ամեն ինչ սրբող-տանող տիեզերական հոսք: Նա հատկապես մոլեգնում է իր սիրասուն կնոջ՝ **Սատիի** հոր՝ **Դակշիի** զոհաբերության ժամանակ: Ըստ ավանդության, այս երկու աստվածների հարաբերությունները ի սկզբանե լարված էին, և երբ Սատին դառնում է չափահաս՝ Դակշին բոլոր աստվածներին հրավիրում է մասնակցելու փեսացուներ ընտրելու արարողությանը, բացի Շիվայից: Սակայն Սատին, որը Շիվային սիրում էր դեռևս նախորդ կյանքերից սկսած, չտեսնելով նրան փեսացուների շարքում, իր ամուսնական պսակը նետում է դեպի վեր և տալիս Շիվայի անունը: Քիչ անց հայտնվում է մոլեգին Շիվան՝ ամուսնական պսակը վզին: Դակշին

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում:

այլ ելք չի մնում, քան Շիվային ճանաչել որպես փեսա: Բայց անսանձ Շիվան չի ուզում աներոջը պատվել, որն առաջ է բերում վերջինիս զայրույթը: Դակշին նզովում է Շիվային՝ ասելով, որ նա չի ստանա զոհաբերության իր հասանելիքը, որի պատճառով կատաղած Շիվան արարում է հազարագլուխ, հազարաձեռն և հազարաչք հրե սարսափելի մի էակի, որը ծածկված էր վագրի մորթիով, հարբած էր արյունով և զինված էր բազմաթիվ նիզակներով, մահակներով և այլ մահաբեր զենքերով: Այս կենդանին իր հերթին ծնում է իր նման հազարավոր այլ էակների, որոնք սկսում են շուրջբոլորը ավերել և քանդել: Նրանք շուտ են տալիս զոհասեղաններն ու ամանեղենը, պղծում են կերակուրը, խժռում ամեն ինչ և խմում սրբազան աստվածային խմիչքը: Այնուհետև նրանք հարձակվում են սարսափած աստվածների վրա, նրանք ծեծում, հայհոյում և անարգում: Ի վերջո խելագարված Շիվան գլխատում է Դակշիին, սակայն երբ ուշքի է գալիս, սկսում է մեռածներին հարություն տալ, բայց Դակշիի գլխատված գլուխը չի գտնում և նրան վերակենդանացնում է այծի գլխով:

Սակայն Շիվան միշտ չէ, որ մարտի է բռնվում աստվածների հետ: Նրա հիմնական հակառակորդները դևերն են՝ մարդկանց և աստվածների հակառակորդները, որոնց հետ պայքարում Շիվան բազում սխրանքներ է գործում: Դրանցից ամենահայտնին **Տրիպուրայի**՝ Երեք քաղաքների կործանումն է: Տրիպուրան՝ ոսկե քաղաքը երկնքում, արծաթե քաղաքը օդում և երկաթյան՝ երկրի վրա, ասուրներին¹¹ էր նվիրել Բրահման՝ անձնվեր ծառայության դիմաց: Ասուրները դրանից անչափ գոռոզանում են և աստվածներին պատերազմ հայտարարում: Աստվածներին այս անգամ էլ օգնության է հասնում Շիվան: Նախապատրաստական երկար աշխատանքներից հետո ի վերջո նա մեկ նետով խոցում է երկնքում, օդում և երկրի վրա մեկ շարքի վրա հայտնված Երեք քաղաքները միաժամանակ, որից հետո նա ստանում է նաև **Տրիպուրանտակա** (Տրիպուրայի կործանիչ) աստվածային անունը:

Շիվան բազմաթիվ դեպքերում անընդհատ հաստատում է իր հզորությունը և ուժը, որը հաղթահարելը վեր է բոլորի ուժերից: Նրա հավատի հակառակորդները նրա դեմ են ուղարկում հզոր վագրին և հսկա օձին, որոնց նա հաղթում է և ճկույթով վագրին մորթազերծ անելով՝ մորթին զցում է վզին, իսկ օձին փաթաթում է իր վզին՝ ինչպես մանյակ:

Ինչպես արդեն նշվեց, Շիվայի կերպարի կենարար ուժն ու անսպառ էներգիան մարմնավորում է նրա գլխավոր խորհրդանիշը՝ լինգամը (ֆալլոսը)¹²: Այն պաշտամունքի առարկա է ողջ Հնդկաստանում, որին կարելի է հանդիպել ոչ միայն շիվայական, այլև հինդուիստական գրեթե բոլոր տաճարներում: Լինելով խիստ կոնկրետ և ռեալիստական՝ այն անմիջականորեն կապվում է պտղաբերության և որդեծնության հետ: Միաժամանակ այն նաև կարող է լինել խիստ վերացական խորհրդանշան, որը բխում է հոգու խորքից: Լինգամն իր մեջ ամփո-

¹¹ Ասուրները վեդայական և հին հնդկական առասպելներում Բրահմայի սերունդ համարվող այն աստվածություններն են, որոնք հիմնականում օժտված են բացասական հատկանիշներով և որակներով: Մանրամասները տե՛ս *Лосева И. Н., Капустин Н. С., Кирсанова О. Т., Тахтамьшев В. Г.* Мифологический словарь, М. 2000, с. 76-77.

¹² Մանրամասները տե՛ս История религии. В 2 т. Т. 1, с. 312, Индуизм, Джайнизм, Сикхизм: Словарь, с. 254-255.

փուն է «կյանքի գաղտնիքը», արարումը, պտղաբերությունը, որոնք դրսևորվում են տիեզերական բոլոր աստիճաններում և հնարավոր դարձնում կրոնական ձգտումը՝ կերպարի և խորհրդանշանի տեսքով: Այսպիսի լայնիմաստ հատկություններով լինգամը ձեռք է բերել կրոնական ամենատարբեր և բազմազան կիրառություն: Մասնավորապես՝ անգավակ մայրը պաշտում է լինգամը՝ հղիանալու ակնկալիքով և այն ողողում է ծաղիկներով: Միաժամանակ այդ նույնն անում է շիվայական բհակտին (ճգնավորը), արտահայտելով իր անսահման նվիրվածությունումը սիրելի աստծուն, իսկ յոգը, ձեռք տալով լինգամին, կարող է խորասուզվել մեդիտացիայի մեջ:

Շիվայի բազմաթիվ կերպարների մեջ առանձնանում է նաև սիրասուն հոր կերպարը: Նրա կինը՝ **Պարվատին** է (նաև **Ումա**, **Գաուրի**)՝ Հիմալայների արքայի դուստրը: Շիվայականության մեջ նա խորհրդանշում է իգական սկիզբ շակտին (այդ մասին ստորև) և շակտիականության մարմնացումներից մեկն է: Նրա որդիներն են իմաստության աստված **Գանեշը** (փղագլուխ աստվածը) և Թարակ դևին հաղթող ու աստվածների զորքի առաջնորդ պատանի **Սկանդան**: Շիվան հաճախ է պատկերվում իր ընտանիքի հետ միասին՝ խաղաղության և անդորրի մեջ: Նրան, որպես կանոն, ուղեկցում է նրա փոխադրամիջոցը համարվող **Նանդի** ցուլը, որի արձանները դրված են Շիվային նվիրված բոլոր տաճարներում: Շիվայի կնոջ կերպարի այլ մարմնացումներ են **Կալին** և **Դուրգան**, որոնք ևս հայտնի են դարձել դևերի դեմ տարած հաղթանակներով:

Ընդհանրապես ուսումնասիրել շիվայականությունն առանց շակտիականության հնարավոր չէ: Շիվայականությունն անմիջականորեն առնչվում է շակտիականությանը¹³ (սանսկրտ. շակտի՝ ուժ, էներգիա)՝ կանացի աստվածային էներգիայի պաշտամունքին, որը հիմնականում ընկալվում է իբրև աստվածային էներգիայի (սովորաբար Շիվայի) մարմնավորում: Ընդհանրապես շակտիականությունը կարելի է համարել Մայր աստվածուհու (**Պևի**) պաշտամունք, որը հանդես է գալիս բազմաթիվ մարմնավորումներով և բազմազան կերպարներով: Շակտիականների համար Աստված միաժամանակ թե՛ անձն Աբսոլյուտն է (Շիվան), և թե՛ Աստվածային դրսևորումը (Շակտի):

Շակտին պրակտիկորեն ունի անթիվ դրսևորումներ՝ իգական անդեն յուրատեսակ ստեղծագործական սկզբունքից մինչև կոնկրետ աստվածուհիներ, որոնց մի մասը ունեն համահնդկական պաշտամունքային տարածվածություն, իսկ մի մասն էլ մնացել են միայն տեղական, գյուղական Մայր աստվածուհու մակարդակի: Ճանաչել Մայր աստվածուհուն իր բոլոր դրսևորումներով կամ իմանալ նրա բոլոր անունները՝ գործնականում անհնար է: Նա կարող է լինել երջանկության և բարգավաճման աստվածուհի **Լակշմին**, բարի ու խաղաղասեր **Պարվատին** (թախժոտ), **Սատին** (առաքինի) կամ **Գաուրին** (սպիտակ), ինչպես նաև ցասումնալի և սարսափազդու **Կալին** (սև), **Դուրգան** (անխոցելի) կամ **Չանդին** (կատաղի): Աստվածուհու կերպարը ներկայանում է մեկ հավատարիմ կնոջ, մեկ սիրասուն մոր, մեկ կրքոտ սիրուհու, մեկ հրեշի, մեկ էլ ամուսնու (առանց որի չի կարող իրագործել իր աստվածային առաքելությունը) ստեղծագործ և արարիչ էներգիայի՝ շակտիի տեսքով: Նրա պատկերները ամենուր են՝ մեծ տաճարնե-

¹³ Մանրամասն տե՛ս Индуизм, Джайнизм, Сикхизм: Словарь, с. 455.

րում, սովորական գյուղական ճանապարհների վրա, արհեստավորների կրպակներում և այլուր: Այս կամ այն կերպ աստվածուհու բազմազան դրսևորումներին առնչվում է յուրաքանչյուր հինդուիստ, որին աստվածուհիները ուղեկցում են ծնունդից մինչև մահ՝ իրականացնելով մարդկանց, ընտանիքների, տոհմերի և կաստաների պահապան գործառույթները:

Հիմնականում շեշտադրելով իգական և արական սկզբունքների համագոյակցությունը և պտղաբերության համատեղ իրագործումը՝ Շակտիի դրսևորումներից մեկն էլ դարձավ **Արդհանարին**՝ Շիվայի մարմնացումներից մեկը, որը մարմնի մի մասով տղամարդկային է, մյուս մասով՝ կանացի: Ընդհանրապես շակտիականության մեջ Շակտիի դրսևորում աստվածուհիները հիմնականում առնչվում են Շիվայի պաշտամունքին: Սակայն այդ առնչությունները երբեմն ներդաշնակ չեն և բազմաթիվ առասպելներ և ավանդություններ են պահպանված, որոնք ներկայացնում են Շակտիի և Շիվայի հակամարտությունները, որոնցում ոչ միշտ է, որ հաղթում է Շիվան: Մասնավորապես Կալիին երբեմն պատկերում են պառկած Շիվայի վրա պարող աստվածուհու տեսքով, որի մեկնաբանությունը հիմնականում այն է, որ Շիվան առանց Շակտիի զուրկ է ստեղծագործ սկզբից, պասիվ է, սակայն Շակտին նույնպես նրա կարիքն ունի, որի համար էլ Շիվան նրա հենարանն է¹⁴: Շակտիականությանը հատկանշական է այն, որ Շիվան, իբրև բարձրագույն սկիզբ, իրեն դրսևորում է միայն Շակտիի միջոցով, որը այս դեպքում ընկալվում է իբրև նրա արարչագործ ուժ:

Այսօր շիվայականությունը հիմնականում մեծ տարածում է գտել Հնդկաստանի հարավում և արևելքում, և հարավային Հնդկաստանը արդարացիորեն համարվում է «Շիվայի երկիրը», սակայն շիվայականության դիրքերը ամուր են նաև այլ տարածաշրջաններում, բայց սեփական առանձնահատկություններով և պաշտամունքային ձևերով, յուրատիպ ծեսերով և ավանդույթներով՝ միաձուլված տեղական հավատալիքներին: Յուրաքանչյուր նորալուսնի օր շիվայականները տոնում են «Շիվայի գիշերը», իսկ տարին մեկ անգամ մեծ շուքով նշում են **մազհա** (հունվար-փետրվար) ամսվա 30-ի մութ գիշերը:

ШИВАИЗМ

П. А. БАРСЕГЯН

В статье в общих чертах представлено одно из основных направлений индуизма-шиваизм. В основном большое внимание уделено критическому анализу различных персонажей, мифологических и культовых особенностей многоликого Шивы, а также ряда явлений связанных с его культом.

SHAIVIZM

P. A. BARSEGHYAN

The article explores in general one of the main trends of Hinduism – shaivism. The author analyzes the mythological and worshipping particularities of multifunctional Shiva, different images as well as various phenomena connected to the worship of Shiva.

¹⁴ Տե՛ս **Альведиль М. Ф.** Индуизм. Главная религия Индии, с. 64.